

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Утп түшілтөрө - Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

፭.፻፷፻ 8421

G 661


Կազմող՝ Գ. Ն. Երգնելյան

Ալեքսանդր Շիրվանզադե

Պատմվածքներ (կազմ.՝ Գ. Ն. Երզնկյան), Երևան, 1986. — 175էջ:

¶ 661 Գրանցում պարզ երևում է հեղինակի լավագույն պատմվածքների մի շարք ստանությունը՝ ստորաբարչության, շողոքությունը, մարդու ստոր արարենքի նկատմամբ:

C 4702080100 (51) 206 1986
702 (01) 1986



Александр Ширванзаде
РАССКАЗЫ
(на армянском языке)
Издательство «Луйс»
Ереван—1986

© «Էպիզո» հրատարակչություն, կաղմելու համար, 1986



ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆԸ

(Պատկեր)

— Բարի լուս, եղբայրս, ինձ ձեռաց երեք ոուրլի փող է հարկավոր:
Տուր:

Այս ասելով, Միսակը կանգնեց փողոցում, պատի տակ և իր կեղտուա
ձեռը անմիջապես պարղեց Արամին երեխ նա միանդամոյն հավատացած
էր, որ առանց ալլեայի ուղածն իսկույն պիտի ստանա, ինչպես ստացել
էր ամեն շարաթ տամանումնեկ տարի շարունակ:

Մինչդեռ Արամն այն օքը ոչ միայն տրամադիր շէր եղրորը իրող
տալու, այլև հաստատապես վճռել էր մի անգամ ընդմիշտ ազատվել
նրա անամոթ մուրացկանությունից, որ վաղուց արդին ծանծրացրել էր
նրան: Այսպես էր պահանջում նրանից իր կինը հանուն հինգ փոքրիկ զա-
վակների, որոնց կերակրելն ու հացցնելը դուրքին բան չէր մի հասարակ
արհեստավորի համար: Կար և մի ուրիշ նշանավոր պատճառ, որ ստիպում
էր Արամին կտրել ամեն կապ իր հարազատ եղրոր հետ: Եվ այս պատ-
ճառն այսօր նրան թվում էր այնքան ստիպողական, որ դեռ առավատ թե-
ժի միջոցին ինքն իրեն մատածում էր, թե ինչպես է, որ մինչև այժմ նա դեռ
հարամերություն ունի իր եղրոր հետ կամ նույնիսկ թույլ է տալիս իրեն
հետ խոսելու:

Նա մինչև անգամ երեսը շղարձրեց Միսակին, լսելով նրա խոպու
ձայնը: Կանգնած իր արծեստանոցի դռների առջև նայում էր հեռու: Այն-
տեղ, փողոցի ծայրում, մի լայն հրապարակում տիրում էր մի տեսակ
իրարանցում, որ վերջին ամիսները զարձել էր սովորական: Ոստիկան-
ների մի աջազին խոմբ, գավթապահների օգնությամբ ցրում էր ամրո-
խը, որ բոլոր մերձակա փողոցներից դիմում էր դեպի հրապարակ:

— Իսկի շարժե մտիկ անել,— ասաց Միսակը, ձեռը շարժելով օպի
մեջ,— դատարկ բան է: Քարվանսարայի ծույլ գործակատարները գոր-
ծադուլ են արել:

— Էլի:

— Էլի, — շարունակեց Միսակը, կանգնելով եղրոր առջև, — ստի-
պում են խանութները փակել: Իսկ ոստիկանները պահանջում են բաց
անել: Խեղճ վաճառականները հա, հա, հա, երկու կրակի մեջ են: Դեռ են
նայում՝ հարված են ստանում, գեն են նայում՝ ապատի Մի պառավ կնիկ
աշքերիս առջև ընկավ ձիերի ոտների տակ և լավ ճնշտվեց:

— Ինչո՞ւ:

— Որդին գործակատար է, ապստամբվողներից մեկն է: Մայրն
ուղում էր նրան ապատել ոստիկաններից: Ինձ էլ մի բանի հարվածներ
հասան:

— Հետո՞ւ, ի՞նչ պատահեց այն պառավ կնոջը, — հարցրեց Արամը,
հակառակ իր կամքի, երեսը դարձնելով եղբորը:

— Ազատվեց: Եվ փոխե՞ս ում չնորհիվ, այ քո հարազատ եղրոր, Մի-
սակ Առաքելովից Դարավայնի: Այո, գնդակի արագությամբ ընկա ծիրի
մեջ, դեռ հրեցի, գեն հրեցի, վերցրի գետնի վրա փոված պառավին և
դուրս բերեցի ամբոխի միջից: Ճնոց այդ ժամանակ ինձ հասան մըտ-
րակի հարվածները: Այս, ինչպես են զարկում, ինչպես, աստված
ազատի Արամ, Արամ, շատ վատ ժամանակներում ենք ապրում: Մարդու
կյանքը բոլորովին ապահով չէ: Եթե խելք ունես, իսկի
գլուխ բնիցդ դուրս մի հանիր Հասկան՞ամ ես ինչ եմ ասում: Եթե չես
հասկանում, վայ քո գլխին, վայ քո կնոջը, երեխաններին ու արհեստա-
նոցին: Ես շատ մոտիկ բարեկամ մարդու մի քանի անգամ զգուշացրի,
ուշադրություն շղարձրեց: Այժմ նա կամրջի գլխի պալատումն է: Գիտե՞ս
ինչ եմ ասում, եղբայր՝ պատվական: Փորձանք եկավ գլխին, ինքն է մե-
ղավոր: Առհասարակ այդ գործում փորձանքի մեջ ընկնողները բոլորն էլ
իրանք են մեղավոր: Այո, ժամանակները վատացել են, շատ են կատաղել
Տուր շուտով երեք ուուրի:

Մինչ Միսակը բարբառում էր, Արամը ուշադիր դիտում էր նրա կար-

միրակապտագույն թորշոմած դեմքը: Այդ անբնական փրկած ալտերը, թերթերունքներից զրկված կոպերը, արյունալի պլղած աչքերը, թարախով լի բշտիկներով ժածկված քիթն ու ճակատը կրում էին ոչ միայն ոգելից ըմպելիքների կործանիչ աղդեցությունը, այլև մի սոսկալի մարմնավոր ախտի զգվելի դրոշմք: Դա անզործ, արրշիո շրջմոլիկի մի տիպար էր, փողոցի սեփականություն: Մեկն այն թշվառներից, որոնց անողոր ճակատագիրը քաշություն էր դեպի կյանքի ստոր խորշերը, որպեսզի այնտեղ ոչնչացնի նրանց անհետք, ինչպես անբնական անասունների:

Սրամը շաբաթը մեկ անգամ տեսնում էր այդ եղելի կերպարանքը իր արհեստանոցի դռների առջև կանգնած՝ սովորական տուրքին սպասելիս: Տեսնում էր նրա օր-օրի վրա վայր ու վայր ընկնելը և ցավում էր ու վշտանում, որպես կարող է վշտանալ միևնույն սրբանդից ծնված եղբայրը: Նա վաղուց էր իր եղբորը համարում կորած և վաղուց էր դադարել համոզել նրան հետ զառնալ դեպի անդունդ տանող ճանապարհից, մի անգամ առմիջապես համոզվելով, որ ոչ մի խրատ և ոչ մի քարոզ չի կարող փրկել նրան: Հարբեցությունը, սուտը, անամոթությունը, խարեւոթյունը, ծովությունը այդ մարդու մեջ գտել էին հավիտենական բուն: Վերջին ժամանակները նա սկսել էր մինչև անգամ գողություն անել, թեև այնքան զգուշ, որ դեռ ոստիկանության ձեռքը չէր ընկել, կամ գուցե ընկել էր և դուրս պրծել.. սովորական ճանապարհով: Այս բոլոր ախտերը հայտնի էին Արամին, և նա դեռ եղբայր էր համարում նրան, դեռ օգնում էր նրան... կարեցությունից գրդված:

Խսկ այժմ.. Այժմ պատահել էր մի բան, որի հետ չէին կարող հաշտվել Սրամի զգացումները: Նա նայեց եղբոր կարմրած աշքերին, որոնց իմաստն այսօր առաջին անգամ թվաց նրան այնշափ կասկածելի և հրող, ու զգաց դեպի նա նոր տեսակի ատելություն: Ատելություն, որ խառն էր սուր զզվանքի հետ: Այն մարդը, որ մինչև այժմ նրա մեջ զարթեցրել էր միայն ամոթի, կարեցության և վշտի զգացում, այսօր թվաց նրան այնպիսի մի արարած, որին համեմայն դեպս կարեցել չէր կարելի: Եվ տպավորությունն այնքան խորն էր, որ Սրամը հանկարծակի ցնցվեց:

— Այս, եղբայր,— շարունակեց Միսակը, տեսնելով, որ իր խոսակցությունը այսօր, հակառակ սովորականին, գրավում էր եղբոր ուշադրությունը,— և շատերին եմ ասում, խսկ քեզ պարտավոր եմ ասել, որովհետեւ հարադարձ եղբայր եմ, այն էլ մեծ եղբայրդ, լսիր, լավ լսիր:

Նա մի քայլ և առաջ քեզ և բերանը մոտեցրեց եղբոր ականցին: — Այստեղ քո կազմարանում դու ունիս մի բանի արհեստավորներ ջահել տղերք են, տաք զլուխներ, չեն հասկանում ինչ են անում: Ահա

նրանք կարող են քեզ փորձանքի մեջ դցել, վկա է աստված: Սուս, մեր մեջ մնա, նրանց ոչինչ չասես: Կարող են ինձ մյուս աշխարհն ուղարկել...

— Ամենքից վլտանգավորները կազմարաբներն են, որովհետեւ նրանք դիրք շատ են կարգում: Հըմ, ճշմարիտ չհմ ասում: Լավ մտածիր: Հենց մեկը դու Օ՛, օ, ևս գիտեմ, թե ինչեր ես կարդացել և այժմ գլուխ ինչով է լցված...

— Հետո, հետո,— ընդհատեց հանկարծ Արամը, որ մինչև այդ ժամանակ լուս էր և զնող հայացքով նայում էր եղբորը, — շարունակիր:

— Ուրիշ ոչինչ, ևս ասացի բոլորը:

— Ինչո՞վ է լիբը զլուխս, հըմ, ինչո՞վ:

— Թքիր, ևս քեզ հետ կովելու շեմ եկել այստեղ: Թողնենք: Վախենում եմ: Մեկ էլ տեսար կնիկդ եկավ, երեսիս թքեց, վլակոթիս տվեց և դուքս արավ տնից: Հա, հա, մանից դուրս արավ: Ինչպիս, քանի որ տունդ իսկի մի անգամ էլ ոտ շեմ դրել: Չես թողել, որ ներս մտնեմ: Կնիկը ինձ ատելով ատում է: Ինձ, կուեմսկի սեպիստրատորիս: Ո՞վ: — Մի կալատողի ազդիկ: Մի նեղանար, եղբայր, կնիկդ քեզ շատ է փտխել: Առաջ դու ալեկի բարի էիր: Նա զզվում է ինձանից: Ինչո՞ւ Ռուբիչես պիշչակս յուղու է, պատուառուված, շապիկիս վրա գինու թծեր կան, օծիքս սեացած է, կոշիկներս ծակ, վարտիքիս ծայրերը գլազված՝ պլիմս կեղտոտ մագերիս պես: Իսկ քիթս, նրա ասելով փտած բաղրջանի է նման: Հոտ է գալիս ինձանից, ինչպես խողից կամ շնից: Իի, խի, խի... Տերը նրա հետո կալատողի ալցիկն իրան կոմսունի է համարում: Մի նեղանար, եղբայր, և ճշմարիտ եմ ասում:

— Իմ կնիկը բոլորովին այդ բաների համար չէ, որ քեզ ատում է, Միսակ, — արտասանեց Սրամը այնպիսի հուզումով, որից նրա ձայնը գուշաց, — իմ կնիկը քեզ շատ բաներ է ներել, էլի կնիկի, եթե դու վինեկիր...

Նա կանգ առավ, շրթումքները սեղմելով ատամներով:

— Եթե ես ի՞նչ լինեմի, ասա, ասա, ինչո՞ւ կիսատ թողեցիր: Էհե, բարեկամ, դու ինձ հիմար չկարծես, հասկանում եմ ինչ էիր ուզում ասել: Ես հարբեցող եմ, անզործ, անպիտան, փշացած... Միսակը նայեց եղբորը իր կարմրած, հիվանդու աշքերով և տարօրինակ ժամանակ:

— Ախ, եղբայր, եղբայր պատվական, — խոսեց նա մի բանի վայրկյան լույսուց հետո, — նայում եմ քեզ և ուրախանում: Ինչ աշազին տարբերություն կա քո և իմ մեջ: Գու օրինավոր մարդ ես, երեսիս կազմարար, հա, հա, հա, կրթված կազմարար, իսկ ես.. թյու, ահա թե ինչ եմ, ցիս, ազը... հա, հա, հա, ինտելիգենտ մարդկանց հետ ես նստում ու վեր կենում: Կրագրներում հոգվածներ ես գրում արհեստավորների ու բան-

զորների դրության մասին: Հա, հա, հա, այդ շատ հետաքրքրական է, շատ հետաքրքրական: Պաշտպանում ես գործավորներին, հայոցում ես բուրժուաներին և ձրիակերներին: Ցանկալի է հմանալ՝ քո կարծիքով ես ո՞ր դասակարգին եմ պատկանում՝ բուրժուա, թե՞ բանվոր: Հետո գու ուրիշ՝ դաշտա-դաշտ շատ բաներ են անում: Եվ, որ ամենագլխավորն է, կառուվ ես ման գալիս ընտանիքի հետ: Գիտե՞ս, կառուվ ման գալը քիչ բան չէ, եթե կառապանը քեզ տեսնելիս շուտ-շուտ հետ չի նայում: Մի անգամ ես կառու նստեցի քեֆիս համար և կառապանը ամեն վայրկյան հետ էր նայում: Նա կարծում էր, որ ես քշել պիտի տամ և տեղ հասած թաքուն պիտի ծլվկիմ կառքից, որպեսողի վարձը շվճարեմ: Դեմքս կասկածելի էր նրա համար: Իսկ գու կասկածելի չես, զիտեմ: Օ, օ, ես զիրք չեմ կարդում, բայց գիտեմ կարդալ մարդկանց Հոգիները նրանց հակատների վրա: Ուզո՞ւմ ես ասեմ, թե կնիկդ ինչու համար է ինձանից զզվում այժմ, թե ուս ինչու համար ես այսօր այդպես կասկածով և խոր-խոր մտիկ անում ինձ: Գու մի բան ես ուզում իմանալ, զուր մի պլղիլ աշքերդ...

Այդ միջոցին երկու ոստիկաններ մի կապուտ շապիկավոր երիտաշարդի, աջ ու ձախ թեկրից բռնած, տանում էին դիմացի մայթով:

Հանկարծ Միսակը կարեց իր, ըստ երկութիւն, անկապ խոսքերի թելլ, նայեց նրանց և ապա դեպի երկինք, որպես թե անփույթ: Ինչ-որ մի ինքն և բազմախորհուրդ բան ժպիտի պես աղավաղեց նրա առանց այն էլ ալլանդակված դեմքը:

Երամի զնող հայացքից շխուսափեց այդ վայրկենական տեսարանը: Երկար ժամանակ Արամը աշքերով հետևում էր ոստիկաններին և ձերբակալվածներին: Սպասում էր, որ մեկն ու մեկը նրանցից հետ կդարձնի երեսը և կնայի ուրիշ ոչ ոքի, եթե ոչ միայն Միսակին: Բայց ոչ մեկը չնայեց: Նրանք անհետացան փողոցի ծայրում: Միսակը հասկացավ եղբոր մտքերը, հաղաց խոպոտ ծայնով, թքեց մայթի վրա և շարունակեց:

— Պետք է ասած, որ ես քեզանից շնորհակալ եմ, եղբայր պատվական: Մեր ժամանակներում եղբայրություն ասած բանը չկա: Իսկ գու վատ եղբայր չես: Դու մեկ-մեկ ինձ գրաւանի ծախս ես տալիս: Հենց դրա համար է, որ քեզ սիրում եմ և ուզում եմ պաշտպանել ամեն կերպ: Եղբայր պատվական, ուշագրություն դարձրու քո աշակերտների վրա: Նրանք ինչ գործ ունեն ուսանողների հետ: Մի թողնիր, որ ոչ մի ուսանող կամ բանվոր, կամ անծանոթ ուրիշ դժի քո արհեստանոցն առանց գործի, հենց այնպես: Հասկացա՞ր: Պետք է որ հասկանա, հիմար խոմ չես:

— Հասկանում եմ, այո, հասկանում եմ,— արտասանեց Արամը եռանդով ու ջերմագին: Եվ նրա ձայնը գարճալ դողաց:

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, ապա թե ոչ, քիչ էր մնում վախենալիք համար: Էհ, այժմ թողնենք այդ և դառնանք ուրիշ կողմ: Գրողը տանի, այսօր ես սոխակի պես եմ բարբառում, լեզուս խիստ է բացվել: Գիտե՞ս ինչ, զու շատ էլ մի պարծենար քո խելքով: Եթե զու գրել գիտես, ես խոսել գիտեմ: Ես մի ժամանակ դատարաններում փոքրիկ գործեր էին պաշտպանում: Մասնավոր փաստաբան էի, գրողը տանի ինձ: Ահա թե ինչ էի ուզում ասել, եղբայրիկս: Ես քեզ համար շատ բան եմ արել: Օ, օ, ես մինեի, այսօր զու, ով գիտե, քաղցած պիտի զկուայիր: Հիշում եմ այսօրվա պես, զու տանիներկու տարեկան էիր, երբ մեր հայրը, Տեր-Առաքելը մեռավ: Այն ժամանակ ես կոնսիստորիայում գրագիր էի ամսական քանուերկու ուուրլով: Վերցրի քեզ իմ թեկրի տակ ինչպես մայր, որովհետեւ մեր մայրը քեզ ծնելիս էր մեռել: Ես էի, որ քեզ տվեցի Մշուլմանին աշակերտ: Ամենառաջին կազմարարին: Իմ խաթրունա քեզ արհեստ սովորեցրեց երեք տարում: Երկու ամսվա ոռնիկս միացրի քո խնայած գումարին, քեզ համար արհեստանոց բաց արի: Այժմ զու ամենալավ կազմարաններից մեկն ես իմ շնորհիլ, այո, իմ շնորհիլ: Այժմ զու ապրում ես մարդու պես, իսկ ես շան նման կյանքս քարշ եմ տալիս փողոցներում և մի օր անտեր, անօգնական կատակեմ մի աղբանոցում:

— Եվ ո՞վ է մեղավոր, որ զու այդպես ես, — զուեց Արամը:

— Ի՞նչ, ո՞վ է մեղավոր: Դու չգիտե՞ս, որ հարցնում ես: Մոռացե՞լ ես կնոցս: Ախ, այն գարշելի արարածին: Աստծուն է հայտնի, որ ես նրան սիրում էի: Ինչ արավ նա ինձ: Ախ, մինչև այն սարսափելի օրը ես օրինավոր մարդ էի, օղու հոռը չեմ իմանում: Այն օրից ես սկսեցի ընկնել ու ընկնել և հասա, ահա, այս դրության: Ես միայն մի բանում եմ մեղավոր, այն է, որ, այդ բռպեին հենց անկունի մեջ երկուսին միասին շանսակ չարի: Էհ, եղբայր, ինչու ինձ հիշեցրի այդ պատմությունը: Թքիր:

— Բավկական է, լոիր, — արտասանեց Արամը խոլ ձայնով, — զու արդեն սպանել ես թե մեկին և թե մյուսին:

— Ինչ ես հիմար-հիմար խոսում, — վրդովվեց Միսակը, եթե միայն կարող է վրդովվել մի մարդ, որ կորցրել է ամեն մի զգացում:

— Ես գիտեմ ինչ եմ ասում, գիտեմ:

— Գեհ, բավկական է ինչքան խոսեցինք: — Հանկարծ հանդարտվեց Միսակը, — խնդիրն այն է, որ այսօր ես ոչինչ եմ, զրո, սողում, խեղճ, ճիճու, գորտ, ինչ կամենաս, միայն ոչ մարդ: Դու կարծում ես, որ ես չգիտեմ, որ զու ինձ շես սիրում: Ինձ ոչ ոք բանի տեղ չի զնում: Բայց թողհայտնի լինի ամենքին, որ ես էլ թքել եմ բռլորի վրա...

— Այդ ես գիտեմ, գիտեմ, — ընդհատեց Արամը դառն հեղությամբ:

— Գիտես, ավելի վատ քեզ համար: Իմացիր ուրեմն, որ ես այժմ առում եմ մինչև անգամ իմ հոր գերեզմանը: Ինչո՞ւ նա ինձ աշխարհ դցեց: Այս, այս այնքան ճշմարիտ է, որքան և այն, որ կազմաքարներիդ սունդի Հոտն ինձ սկսում է արդեն զգվեցնել: Գլխիս ցավից էլ այստեղ կանգնել չեմ կարող: Տուր ինձ երեք ուրբին: Ես չգիտեմ այսօր քեզ ինչ է պատահել, որ այդպիս ուշացնում ես: Առաջ, որ գլխիս էի ստանալու, շտապում էիր շուտով տուրք ձեռքս դնել և ինձ ճանապարհ ցցել: Տուր, շուտ արա, այսօր զեն կոկորդս չեմ թրչել: Ուզում եմ մի երկու բաժակ ներս ուղարկել, հետո մտնել ամբոխի մեջ: Տես, այն կողմ նայեր, դու խոմ մեզ կին տեսար թիկնապահներով քոռ Մաթոսի բաղնիքը գնալիս: Այժմ երկուսին էլ տանում են: Այ, մտիկ արա, մեկը ուսանող է, մյուսը ատաղծաղործ... Հա, հա, հա,— ծիծաղեց արբշիքը բարձրածայն մի այնպիսի անախործ ծիծաղով, որից Արամը ցնցվեց ոտից մինչև գլուխ:

Պատահեց մի բան, որին Միսակը չէր կարող սպասել: Արամի աշքերը լցվեցին արյունով: Նա գունատվեց: Հետո կարմրեց, հետո կապտեց և հանկարծ, կատվի արագությամբ, հարձակվեց եղբոր վրա և, բըռնելով նրա օճիքից, գոռաց.

— Լոփր, լոփր, գարշելի, ապա թե ոչ՝ խելքս կորցնում եմ:

Միսակը մի կերպ ազատվեց եղբոր ձեռքից, մի քայլ հետ կանգնեց վախեցած:

— Ի՞նչ պատահեց քեզ, դու իսկ որ խելքդ կորցրիր,— ասաց նա շնչառապու:

— Արի ներս, փողոցում նայողներ կան, արի ներս, ես քեզ հետ գործ ունեմ,— գոշեց Արամը և բռնելով եղբոր ձեռքից, ուժով քաշեց, տարավ արհետանոց:

Սյնտեղ ոչ ոք չկար: Օրը կիրակի էր, Արամի արհետավորներն ու աշակերտներն ազատ էին: Առաջին սենյակը, ուր տարավ Արամը եղբորը, ներկայացնում էր կեսընդունարան և կեսարհետանոց: Նա քաշեց եղբորը մի մութ անկյուն և, սեղմելով նրան պատին, մի ձեռքով բռնեց նրա օճիքը և ասաց. — Այսօր դատի օր է, դու պետք է ինձ հաշիվ տաս:

— Բաց թող օճիքս, բաց թող, ասում եմ: Դու գժվել ես: Ինչո՞ւ մասին ես ինձանից հաշիվ պահանջում: Մեր հայրը ժառանգություն ին թողել:

— Թողել է, ամիրավ, թողել է,— մոնշաց Արամը, ավելի սեղմելով նրան պատին,— մի մաքուր անուն: Դու ապականել ես այն: Հենց այս մասին պիտի հաշիվ տաս: Եվ այսօր, անպատճառ այսօր: Ասա այս բուռեին, ո՞ւր է իմ նախակին աշակերտը, այն խելոք, աշխատասեր Հակոբը, որ իր շրջանի պարծանքն էր, ո՞ւր է:

— Բանտում:

— Ինչո՞ւ, անիրավ, ասա ի՞նչ մեղքի համար:

— Աստված գիտես, ես ինչ իմանամ, ես պրոկուրո՞ր եմ:

— Դո՞ւ չգիտես: Օ, օ, դու շատ բան գիտես: Մատնիւ...

Տիրեց մի քանի վայրիկյան լուսիցուն:

Երկու եղբայր նայում էին միմյանց ալֆերին, մեկը համարձակ դատավորի սոսկալի հայացքով, մյուսը ընկճված, բայց իրը և անպատկառ:

— Մատնիւ... Կրկնեց Արամը,— խոստովանիր բոլորը, թանի որ լեզուր բերանում է: Սողուն, ես բոլորը ներել եմ քեզ, բոլորը, բայց այդ մեկը, օ, օ, ոչ, անկարելի է ներել: Դու գերեզման հասցրից մեր հորը բախտառակ կյանքով, ներեցի: Դու ծեծով ու տանջանքով կողզ ստիպեցիր գավաճանել քեզ, ասացի այդ քո գործն է, մատր գողերի ու սրիկաների շրջանը, ես քեզ խղճացի: Եվ միշտ օգնում էի: Դու զրապահել ես ինձ, իմ կնոջն անգամ, զոռալով այս ու այն տեղ, թե մենք գոկել ենք և քեզ, ես համբերեցի: Ես քո բոլոր խայտառակությունները տարել եմ համբերությամբ: Բայց այդ մեկ ախտով ես ներել չեմ կարող: Իրավունք չունեմ ներելու, որովհետև թքում են եղիսիս ամեն կողմից: Ես երկար ժամանակ չեմ հավատում տարածված լուրին: Չէի ուզում հավատալ: Անտանելի է, դառն: Օ, օ, քանի անքուն գիշերներ եմ անցկացրել քո պատճառով: Այժմ արդեն ապացուցված է, որ դու այն ես, ինչ-որ անվանում են քեզ: Ես անհերքելի փաստեր ունեմ, ահա, այնահետ սեղանի մեջ: Դու մոտ քառասուն մարդ ես... Ասա, ինչո՞ւ համար, ո՞վ է քեզ ստիպում:

— Համոզմոնքս,— հազիկ կարողացավ արտասանել Միսակը:

— Ուրեմն խոստովանո՞ւմ ես: Եվ գիտինը ի՞նչ պատավում քեզ ներս կլանելու: Համոզմոնք: Միթե քեզ նման մի սողուն կարո՞ղ է համոզմոնք ունենալ: Խիր,— շարունակեց Արամը, հազիկ շունչ քաշելով և եղբոր օճիքը բաց թողնելով,— ես պահանջում եմ քեզանից, ահա ինչ: Ես կկանչեմ այստեղ բոլորին, որոնք խոսում են քո մասին: Դու պետք է նրանց առջև խոստովանես, թե ով ես դու: Դու մեղա կգաս ծնկաշոք և ահա դրանով ինքդ վերջ կտաս քո գարշելի կրանքին:

Վերջին խոսքերն արտասանելիս՝ նա սենյակի անկյունում դրած գրասեղանի արկղից հանեց մի ատրճանակ և զբեց սեղանի վրա:

— Հի, հի, հի,— ծիծաղեց Միսակը բարձրածայն,— ինչ վախկոտ մարդ ես գտել: Ես գիտեմ, որ իմ կյանքի դատավճիռը տրված է արդեն: Բայց ես ոչ ոքից չեմ վախենում, լսո՞ւմ ես, ոչ ոքից... Դիր իր տեղն ատրճանակը և հանգիստ թող ինձ, ապա թե ոչ, գիտես, ես քեզ էւ...

— Օչ, երանի միայն իմ վերաբերմամբ լինեիր ստոր և զազրելի, Քայլ դու քանի անմեղների ես տանջանքների ենթարկել:

— Ասա, կկատարե՞ս իմ պահանջը, թե չէ:

Միսակը, նայելով նրան լկոի հայացքով, քայլերն ուղղեց դեպի դրոները:

— Մնաս բարով, դու քոնն արա, ես էլ իմը կանեմ:

Արամը կտրեց նրա ճանապարհը, նորից փակեց դռները և եղբորն այնպես հրեց զեպի սենյակ, որ նա, հինգ քայլ հետ գնալով, ընկավ գրասեղանի վրա: Նրա մի ձեռք դիպավ ատրճանակին: Նա բնադրաբարխեց զենքը, ուղղվեց: Այդ բոպեին նրա քայլայված դեմքը սոսկալի էր:

— Կովենք, ուրեմն,— բղավեց նա ատրճանակը բարձրացնելով:

Այնուհետո, հակառակ անկյունում, փոքրիկ, կեղտոտ նստարանի վրա դրված էր մի մեծ և սուր դանակ, որպեսին գործ են ածում կաղմարարները:

Արամը խեց զանակը:

Նրա աշքերը մթնել էին, արյունը գլխովն էր գնում: Նա ոչինչ չէր զգում և մտածում ալլահ, բացի մի բանից, որ իր առջև կանգնած է մի վնասակար սողում, որին պիտի ոչնչացնել:

Միսակն զգաց, որ դրությունը վտանգավոր է: Եվ վճռեց պաշտպանվել: Սակայն հազիվ նա մի շարժում էր արել, երբ զգաց իր կրծքի վրա պողպատի սառնությունը: Լսվեց մի խոզ գղրդյուն, և նա ընկավ հատակի վրա:

— Այդպես, ուրեմն դու հանաք չէիր սնում,— արտասանեց մատնիչը, գալարվելով հատակի վրա,— ախ, ինչ վաս ձեռք ունես:

Արամն արյունոտ դանակը ձեռքին՝ մի քանի վայրկյան գաղանացին աշքերով դիտում էր արածը: Նա զգաց, որ ֆարվածը մահացու է, դանակը ցցվել է ուղիղ եղբոր սրտի մեջ: Գցեց դանակը մի կողմ և նստելով նստարանի վրա, աշքերը ձեռքերով ծածկեց:

— Կանչիր այստեղ վկաներ: Ես կասիմ, որ ինքս ինձ սպանեցի: Եղբայրասպան: Կանչիր: Երեխաներ ունես: Կանչիր, խեղճ ես...

Վիրավորվածն սկսեց խոխուալ և ձգվել: Արամը ցնցվելով, ոտքի կանգնեց և մի քայլ մոտենալով եղբորը, բեկուից տեղն ու տեղը ու արտասանեց:

— Ինչ արի... Եղբորս:— Միսակը մի վայրկյան աշքերը բաց արավել:

— Ասա բոլորին, որ ես մարդկանց ատում էի, որովհետեւ ինձանից գզվում էին ամենքը: Բայց ոչ մի կոպեկ չեմ լերցրել արածներիս համար:

Եվ երեսը դարձնելով պատի կողմը, լսեց հավիտյան...

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆՋԱՂԵ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՐ

Խմբագիր՝ Ս. Ս. Հակոբյան
Նկարիչ՝ Հ. Ա. Կարապետյան
Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանյան
Տեխն. խմբագիր՝ Մ. Ն. Իավրյան
Վերսուլող սրբագրիչ՝ Ռ. Ս. Հովհաննես

ИБ 2141

Հանձնված է շարվածքի 03. 02. 1986 թ.: Ստորագրված է տպագրության՝ 3. 06. 1986 թ.: Թուղթ № 3, չափար՝ $60 \times 84^1/16$: Տպագրությունը՝ բարձր Տառատևական՝ «Գրքի սովորական»: Հրատ. 9,56 մամ., տպ. 11,0 մամ., պայմ. 10,23 մամ., տպ. 10,5 դոն. թ. օտա. Պատվեր 197: Տպագանակ՝ 50 000:

Գինը՝ 95 կուգ.

«Լույս» հրատարակություն, Երևան-9, Կիրովի 19 ա:

Издательство «Луис», Ереван-9, ул. Кирова, 19 а.

ՀԵՍ Հրատարակությունների, պոլիգրոֆիայի և գրքի առևտիք գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Աւալերյան 55:

Гипография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.